



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2017

Բովանդակություն

Նախաբան.....	3
1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի կառուցվածքը.....	4
2. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները	5
Հղումներ	6

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2017 թվականի աշխատանքային ծրագրի 11-րդ կետի (Որոշում N°399) և արտացոլում է հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի N°61Ա որոշման (այսուհետև՝ Որոշում) N°1 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանի համապատասխանության գնահատումը հանձնաժողովի **Որոշմամբ** սահմանված լրացուցիչ պահանջներին:

Հանրային կազմակերպությունների գնումների պլանի մոնիթորինգը ներառում է հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատումը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) 2017 թվականի տարեկան հաստատված բյուջեի (միայն հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով կատարվող գնումների մասով) հիման վրա կազմված, հանձնաժողով ներկայացված, հետագայում հանձնաժողովի կողմից իրականացված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում լրամշակված և ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում և Ընկերության պաշտոնական կայքում վերահրապարակված գնումների պլանի հիման վրա:

1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի կառուցվածքը

Ընկերությունը 2017 թվականի հունվարի 25-ի №6Ա որոշման հիման վրա ներառվել է հանձնաժողովի Որոշմամբ հաստատված գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկում՝ միայն հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով կատարվող գնումների մասով:

Համաձայն հանձնաժողովի Որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջների՝ ընկերությունը սահմանված ժամկետում իր պաշտոնական կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել է 2017 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հանձնաժողովի 2017 թվականի «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքների հիման վրա լրամշակված գնումների պլանը:

Համաձայն հրապարակված գնումների պլանի, 2017 թվականին ընկերությունը նախատեսում է հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով կատարել 1 103,7 մլն դրամ (առանց ԱԱՀ) ընդհանուր արժեքով գնումների 41 գործարք՝ հետևյալ մասնաբաժիններով (աղյուսակ 1):


Աղյուսակ 1

№	Գնման առարկա	Գնումների պլանավորված արժեքը մլն դրամ (առանց ԱԱՀ)	Գնման ուղղության մասնաբաժինը ընդհանուր գնումներում (%)
1	2	3	4
1	Աշխատանք	922,9	84%
2	Ապրանք	180,7	16%
	Ընդամենը	1 103,7	100%


Գնումները նախատեսվում է իրականացնել երկու ընթացակարգով՝ բաց մրցույթ և գնանշմամբ հարցում: Պլանավորված գործարքների վերաբերյալ տվյալներն ըստ գնման ընթացակարգերի ամփոփված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

№	Գնման ընթացակարգեր	Պլանավորված գնումների քանակը (հատ)	Գնումների սկզբնական պլանավորված արժեքը մլն դրամ (առանց ԱԱՀ)	Գնման գործընթացի մեկնարկի ժամկետները (2017թ.)
1	2	3	4	5
1	Բաց մրցույթ	37	1 099,6	փետրվար - հոկտեմբեր
2	Գնանշմամբ հարցում	4	4,08	փետրվար - օգոստոս
	Ընդամենը	41	1 103,7	



Նկար 1. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)



Նկար 2. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)

2. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները

Ընկերության գնումների պլանի մոնիթորինգի արդյունքներից կարելի է փաստել, որ լրամշակված գնումների պլանը կազմված է պատշաճ մակարդակով:

Հղումներ

1. Հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի N°61Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N°6Ա որոշում,
2. Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու եվ այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու մասին» N°61Ա որոշում: